

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ,
ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄ

Օգտվողի ուղեցույց

Բովանդակություն

Փաստաթղթի մասին	- 2 -
Համակարգի ընդհանուր նկարագրություն	- 3 -
Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին	- 4 -
Դիմումներ էջ	- 7 -
Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին	- 9 -
ՀԴՄ-ներ էջ	- 11 -
Դիմում՝ ՀԴՄ գրանցումից հանելու մասին	- 13 -

Փաստաթղթի մասին

Այս փաստաթուղթը մանրամասն նկարագրում է նոր տեսակի ՀԴՄ-ների ստացման կարգը՝ նկարագրելով յուրաքանչյուր գործողության մանրամասները:

Ուղեցույցը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- Համակարգի ընդհանուր նկարագրություն
- ՀԴՄ ձեռք բերելու մասին դիմումի լրացում
- Դիմումների վերաբերյալ հաշվետվություն
- ՀԴՄ գրանցելու մասին դիմումի լրացում
- ՀԴՄ-ների վերաբերյալ հաշվետվություն
- ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին դիմումի լրացում

Համակարգի ընդհանուր նկարագրություն

Նոր տեսակի ՀԴՄ-ներ ձեռք բերելու համար հարկ վճարողը պետք է առաջին հերթին կատարի ՀԴՄ-ի ձեռք բերման համար անհրաժեշտ վճարում, այնուհետև հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից լրացնի և հանձնի ՊԵԿ «100. Դիմում ՀԴՄ ձեռք բերելու մասին» ձևը: ՀԴՄ ձեռք բերելու մասին դիմումը հնարավոր է ներկայացնել միայն էլեկտրոնային տարբերակով՝ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հանձնված «Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին» դիմումը ուսումնասիրվում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրասենյակ պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ ՊՈԱԿ)» գրասենյակի կողմից: Եթե այն լրացված է առանց սխալների և կատարված են անհրաժեշտ վճարումները, ապա ՀԴՄ ձեռք բերելու մասին դիմումը բավարարվում է, հակառակ դեպքում՝ մերժվում: Բավարարված դիմումների հիման վրա ՊՈԱԿ-ը հարկատուի համար գրանցում է ՀԴՄ և այն փոխանցում հարկատուին: Ստացված ՀԴՄ-ն հարկատուն ակտիվացնում է՝ մուտք անելով հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով նախօրոք իրեն տրամադրված հաստատման կողմ:

Հետագայում գործող ՀԴՄ-ն գրանցումից հանելու համար հարկատուն հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնում է «97. Դիմում՝ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին» ձևը, որից հետո արդեն կարող է ՀԴՄ-ն հանել գրանցումից անմիջականորեն ՀԴՄ սարքից՝ համապատասխան հրահանգի միջոցով:

Արդեն գրանցումից հանված ՀԴՄ-ն այլ հասցեում գրանցելու համար հարկ վճարողը հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնում է «101. Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին» ձևը:

Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում առկա «ՀԴՄ-ների ցանկ» և «Դիմումներ» էջերից հարկատուին հասանելի են ստորագրված և ՊԵԿ հանձնված «Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին» դիմումները և ՊԵԿ-ում գրանցված այս նոր տեսակի ՀԴՄ-ների ցանկը:

Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին

ՀԴՄ ձեռք բերելու համար անհրաժեշտ վճարումը կատարելուց հետո հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից լրացնել և հանձնել ՊԵԿ «100.Դիմում ՀԴՄ ձեռք բերելու մասին» ձևը: Դրա համար անհրաժեշտ է մուտք գործել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ՝ «Հաշվետվություններ» բաժին՝ «Հաշվետվության ձևեր» և ընտրել 100 համարի ձևը, որն ունի հետևյալ տեսքը՝

The screenshot shows a web-based form titled "100. Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին". The form is organized into several sections:

- Section 1:** Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին. Includes fields for "Քատարողի հերթական համարը" (01012248) and "Իրավաբանական անձի անվանումը" (Փնտրել).
- Section 3:** ՀԴՄ-ի տվյալներ. A table with columns: 3.1 ՀԴՄ-ի տեղադրման հասցե, 3.2 Գործու. նեռ. ֆյան տեսակ, 3.3 Մարզ, 3.4 Համայնք, 3.5 Քնակավայր, 3.6 Փողոց, 3.7 Ենթ, 3.8 Քնակարան, 3.9 Հեռ. + (374)10123456, 3.10 Անտրի իրակ վայր, 3.11 Անտրի իրակ վայրի կազմ, 3.12 Քանակ.
- Section 4:** ՀԴՄ-ների ձեռքբերման համար կատարած վճարումներ. Includes fields for 4.1 Վճարման ա/թ, 4.2 Վճարման անդրադրագրի համարը, and 4.3 Վճարված գումարի չափ.

- 1-ին տողը լրացվում է համակարգի կողմից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված տեղեկությունների հիման վրա:
- 2-րդ տողը լրացվում է համակարգի կողմից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված տեղեկությունների հիման վրա:
- 3.1 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված՝ ապրանքների մանրածախ վաճառքի կամ ծառայությունների մատուցման օբյեկտների ցանկից ընտրվում է այն օբյեկտը, որի համար անհրաժեշտ է կիրառել ՀԴՄ

կամ ընտրվում է «Նոր» արժեքը, եթե անհրաժեշտ հասցեով օբյեկտը գրանցված չէ համակարգում:

4. 3.2 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գործունեության տեսակը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն առկա ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գործունեության տեսակը:
5. 3.3 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու մարզը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու մարզը:
6. 3.4 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու համայնքը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու համայնքը:
7. 3.5 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու բնակավայրը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու բնակավայրը:
8. 3.6 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու փողոցը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու փողոցը:
9. 3.7 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու շենքը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու շենքը:
10. 3.8 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու բնակարանը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու բնակարանը:
11. 3.9 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու հասցեի հեռախոսահամարը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու վայրի հեռախոսահամարը:
12. 3.10 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: Ընտրվում է արդյոք ՀԴՄ-ն գրանցվում է առևտրի իրականացման վայրի համար թե ոչ:
13. 3.11 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: Եթե 3.10 սյունակում ընտրված է «Ոչ», ապա այս սյունակը հնարավոր չէ լրացնել, իսկ եթե 3.10 սյունակում ընտրված է «Այո», ապա ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված առևտրի իրականացման վայր հանդիսացող կազմակերպությունների ցանկից ընտրվում է այն կազմակերպությունը, որի համար անհրաժեշտ է կիրառել ՀԴՄ:
14. 3.12 սյունակում դիմումատուն լրացնում է գործունեության տվյալ օբյեկտում անհրաժեշտ կիրառվելիք ՀԴՄ-ների քանակը:
15. 4.1 սյունակում դիմումատուի կողմից լրացվում է ՀԴՄ-ի համար կատարած վճարման ամսաթիվը:
16. 4.2 սյունակում դիմումատուի կողմից լրացվում է ՀԴՄ-ի համար կատարած վճարման համար տրամադրված վճարման անդորրագրի համարը:

17. 4.3 պունակում դիմումատուի կողմից լրացվում է ՀԴՄ-ի համար կատարած վճարման գումարի չափը:

«Հիշել ժամանակավորապես» հրահանգը պահպանում է դիմումը «Անավարտ հաշվետվություններ»-ի ցանկում, եթե դիմումը չի պարունակում սխալներ:

«Գրանցել» հրահանգը պահպանում է դիմումը «Լրացված հաշվետվություններ»-ի ցանկում, եթե դիմումը չի պարունակում սխալներ:

«100.Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին» գրանցելուց և ՊԵԿ հանձնելուց հետո այն երևում է «Անձնական գրասենյակ»-ի «ՀԴՄ-ներ» բաժնի «Դիմումներ» թափ-ում:

Դիմումներ էջ

Դիմումներ էջը հասանելի է «Անձնական գրասենյակ»-ի «ՀԴՄ-ներ» բաժնի «Դիմումներ» թարփց: Այստեղ երևում են հարկատուի կողմից ստորագրված և ՊԵԿ հանձնած «100.Դիմում ՀԴՄ ձեռք բերելու մասին» ձևերը:

Դիմումի համար	Հանձնման ա/թ	ՀԴՄ-ների քանակ	Վճարված գումարի չափ	Կարգավիճակ	Դիմում	Ստացական
E14ս3210613000045	21.06.2013	19389	0	Բավարարված		
E14ս3110613000012	11.06.2013	2	1000	Ընթացիկ		
E14ս3200613000020	20.06.2013	10	3000	Ընթացիկ		
E14ս3030613000007	03.06.2013	32458	0	Բավարարված		
E14ս3060613000011	06.06.2013	15	16541	Բավարարված		
E14ս3110613000013	11.06.2013	3	2000	Մերժված		

Օգտվողը կարող է փնտրել դիմումները՝ ըստ դրանց համարի, ՊԵԿ հանձնելու ամսաթվի և դիմումի կարգավիճակի: Պեկ հանձնված դիմումի ձևերը ստանում են «Ընթացիկ» կարգավիճակ: Այնուհետև վերանայվում են ՊԵԿ-ի և ՊՈԱԿ-ի կողմից և ստանում են «Բավարարված» կամ «Մերժված» կարգավիճակ:

Գտնված արդյունքների աղյուսակում երևում են

- Դիմումի համարը
- Դիմումի հանձնման ամսաթիվը
- Տվյալ դիմումով նախատեսված անհրաժեշտ ընդհանուր ՀԴՄ-ների քանակը
- Տվյալ դիմումում նշված կատարված վճարումների ընդհանուր չափը
- Դիմումի կարգավիճակը

Դիմում այունակի «Բացել դիմումը» հրահանգի միջոցով կարելի է տեսնել դիմումը՝ PDF ֆորմատով:

Ստացական այունակի «Բացել ստացական» հրահանգի միջոցով կարելի է տեսնել ՊԵԿ-ի կողմից դիմումի ընդունման ծանուցումը՝ PDF ֆորմատով:

Բավարարված դիմումների հիման վրա ՊՈԱԿ-ը հարկային մարմնի տեղեկատվական բազայում գրանցելու է ՀԴՄ-ներ, որոնք տրամադրվելու են հարկատուին: Այս տեսակի ՀԴՄ-

ները, որոնք գրանցված են հարկային մարմնում, օգտվողը կարող է տեսնել «Անձնական գրասենյակ»-ի «ՀԴՄ-ներ» բաժնի «ՀԴՄ-ների ցանկ» թաբլից:

Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին

Արդեն իսկ ձեռք բերած ՀԴՄ-ն գրանցելու համար անհրաժեշտ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից լրացնել «101.Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին» ձևը : Դրա համար անհրաժեշտ է մուտք գործել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ՝ «Հաշվետվություններ» բաժին՝ «Հաշվետվության ձևեր» և ընտրել 101 համարի ձևը, որն ունի հետևյալ տեսքը՝

The screenshot shows a web form titled "101. Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին". It includes a header with the title and a sub-header "Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)". Below this are two main input fields: "1. Զարկ վճարողի հաշվառման համարը" with the value "01012248" and "2. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը)" with the value "ՔԱՆԻՍ".

Below these fields is a table for reporting periods (3. ԳՊՄ-ի տվյալներ). The table has 12 columns: 3.1 ԳՊՄ-ի տեղադրման հասցե, 3.2 Գործունեության տեսակ, 3.3 Մարզ, 3.4 Գամայնք, 3.5 Քնակավայր, 3.6 Փողոց, 3.7 Ընկ, 3.8 Քնակարան, 3.9 Գն. + (374)10123456, 3.10 Առևտրի իրակ. վայր, 3.11 Առևտրի իրակ. վայրի կազմ., and 3.12 ԳՊՄ գործարարային համար. Each row contains dropdown menus for these fields.

At the bottom right of the form, there are two buttons: "Անցնել փաստաթուղթի հարցազեկ" and "Տպագրել".

- 1-ին տողը լրացվում է համակարգի կողմից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված տեղեկությունների հիման վրա:
- 2-րդ տողը լրացվում է համակարգի կողմից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված տեղեկությունների հիման վրա:
- 3.1 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված՝ ապրանքների մանրածախ վաճառքի կամ ծառայությունների մատուցման օբյեկտների ցանկից ընտրվում է այն օբյեկտը, որի համար անհրաժեշտ է կիրառել ՀԴՄ կամ ընտրվում է «Նոր» արժեքը, եթե անհրաժեշտ օբյեկտը գրանցված չէ համակարգում:
- 3.2 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գործունեության տեսակը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն առկա ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գործունեության տեսակը:
- 3.3 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու մարզը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու մարզը:

6. 3.4 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու համայնքը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու համայնքը:
7. 3.5 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու բնակավայրը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն ցանկից ընտրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու բնակավայրը:
8. 3.6 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու փողոցը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու փողոցը:
9. 3.7 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու շենքը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու շենքը:
10. 3.8 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու բնակարանը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու բնակարանը:
11. 3.9 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակում ընտրված օբյեկտի հիման վրա լրացվում է այդ օբյեկտի գտնվելու հասցեի հեռախոսահամարը: Եթե 3.1 սյունակում ընտրված է «Նոր» արժեքը, ապա դիմումատուն մուտքագրում է նոր գրանցվող օբյեկտի գտնվելու վայրի հեռախոսահամարը:
12. 3.10 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: Ընտրվում է արդյոք ՀԴՄ-ն գրանցվում է առևտրի իրականացման համար թե ոչ:
13. 3.11 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: Եթե 3.10 սյունակում ընտրված է «Ոչ» , ապա այս սյունակը հնարավոր չէ լրացնել, իսկ եթե 3.10 սյունակում ընտրված է «Այո», ապա ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված առևտրի իրականացման վայր հանդիսացող կազմակերպությունների ցանկից ընտրվում է այն կազմակերպությունը, որի համար անհրաժեշտ է կիրառել ՀԴՄ:
14. 3.12 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: Դիմումատուն լրացնում է իր մոտ առկա ՀԴՄ-ի գործարանային համարը:

«Հիշել ժամանակավորապես» հրահանգը պահպանում է դիմումը «Անավարտ հաշվետվություններ»-ի ցանկում, եթե դիմումը չի պարունակում սխալներ:

«Գրանցել» հրահանգը պահպանում է դիմումը «Լրացված հաշվետվություններ»-ի ցանկում, եթե դիմումը չի պարունակում սխալներ:

ՀԴՄ-ներ էջ

«ՀԴՄ-ներ» էջը հասանելի է «Անձնական գրասենյակ»-ի «ՀԴՄ-ներ» բաժնի «ՀԴՄ-ների ցանկ» թաբից: Այստեղ երևում են տվյալ հարկատուի համար հարկային մարմնում գրանցված այս նոր տեսակի ՀԴՄ-ները:

ԴՄ-ների ցանկ	Դիմումներ						
<p>Գրանցման ա/թ <input type="text"/></p> <p>Կարգավիճակի փոփոխման ա/թ <input type="text"/></p> <p>Կարգավիճակ <input type="text" value="Գործող"/></p>	<p>SIM քարտ <input type="text"/></p> <p>ՀԴՄ գրանցման համար <input type="text"/></p> <p>ՀԴՄ գործարանային համար <input type="text"/></p>						
<p>Գտնել <input type="text"/></p> <p>Չեղարկել <input type="text"/></p> <p>Արտածել <input type="text"/></p>							
ԴՄ համար	ՀԴՄ գործարանային համար	SIM քարտ	ՀԴՄ-ի տեղադրման հասցե	Գործունեության տեսակ	Կարգավիճակ	Հաստատման կոդ	Գործողություն
0011	11111	093854698	2768420324 321 ԱՆԱՎԵՐԴԻ 333 1 2	Բնակելի տարածք	Գործողությունից հանված		
0012	2142	099444999	2768420324 321 ԱՆԱՎԵՐԴԻ 333 1 2	Բնակելի տարածք	Կորած		
0023	12369	096512587	1911002012 Գորիս	Խաղատուն	Գործողությունից հանելու ընթացքում		
0024	111111	091121212	1996001612 avtokankar12 Մրմլյան	Ավտոկանգառներ		4718	
0021	425424	094444444	2771986814 ԱԳԱԲԱԿ Ներսիսյան	Ստանաբաժնային գործունեություն	Կորած		
0026	111	1321312	2773381614	Ավտոկանգառներ	Գործող		
0022	4444	055555555	2771986814 ԱԳԱԲԱԿ Ներսիսյան	Ստանաբաժնային գործունեություն	Միավանդ սրամաղրված		
0018	544254	093698524	1931002709 aaa Մրմլյան	Գազալիցքավորման կայաններ	Կորած		
0010	1256987	096895654	2773229912 ԱՆԱՓԱՐՄ Ազատություն 1 1	ԱՅԸ	Գործող		
0025	14515	095682121	2771986814 ԱԳԱԲԱԿ Ներսիսյան	Ստանաբաժնային գործունեություն	Գործող		

Օգտվողը կարող է փնտրել իր` հարկային մարմնում հաշվառված այս տեսակի ՀԴՄ-ները ըստ ՀԴՄ-ի` հարկային մարմնում գրանցման ամսաթվի և գրանցման համարի, ՀԴՄ-ի կարգավիճակի, կարգավիճակի փոփոխման ամսաթվի, ՀԴՄ-ի գործարանային համարի ու ՀԴՄ-ում տեղադրված SIM քարտի համարի: Երբ ՀԴՄ-ն գրանցվում է հարկային մարմնում, այն ստանում է «Ընթացիկ» կարգավիճակ: Հարկատուն, ՀԴՄ-ն ստանալուն պես, պետք է այն ակտիվացնի: ՀԴՄ-ն ակտիվացնելու համար անհրաժեշտ է հավաքել հաստատման կոդը: ՀԴՄ-ն ակտիվացնելուց հետո դրա կարգավիճակը դառնում է «Գործող»:

Գտնված արդյունքների աղյուսակում երևում են

- Հարկային մարմնում ՀԴՄ-ի գրանցման ամսաթիվը
- ՀԴՄ-ի` գործողությունից հանելու ամսաթիվը
- Հարկային մարմնում ՀԴՄ-ի գրանցման համարը
- ՀԴՄ-ի գործարանային համարը

- ՀԴՄ-ում տեղադրված SIM քարտի համարը
- ՀԴՄ-ի տեղադրման հասցեն
- ՀԴՄ-ի տեղադրման հասցեում իրականացվող գործունեության տեսակը
- ՀԴՄ-ի կարգավիճակը
- «Ընթացիկ» կարգավիճակ ունեցող ՀԴՄ-ների համար «Հաստատման կողմ», որը պետք է մուտքագրել ՀԴՄ-ն ակտիվացնելիս

Գործողություն սյունակի «Հանել գրանցումից» հրահանգը, որը հասանելի է միայն «Գործող» կարգավիճակ ունեցող ՀԴՄ-ների համար, բացում է «97. Դիմում՝ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին» ձևը:

Դիմում՝ ՀԴՄ գրանցումից հանելու մասին

Գործող ՀԴՄ-ն գրանցումից հանելու համար անհրաժեշտ է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնել և ՊԵԿ հանձնել «97. Դիմում՝ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին», որից հետո արդեն պետք է ՀԴՄ-ն հանել գրանցումից անմիջականորեն ՀԴՄ սարքից՝ համապատասխան հրահանգի միջոցով:

97. Դիմում՝ ՀԴՄ գրանցումից հանելու մասին

Դիմում՝ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	00000019
2. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը)	ԼՈՒՄԱՐՔ

3. ՀԴՄ-ի տվյալներ

3.1 ՀԴՄ-ի գրանցման համար	3.2 ՀԴՄ-ի գործարանային համար	3.3 ՀԴՄ-ի տեղադրման հասցեն	3.4 Գործունեության տեսակը
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

1

Հիշել ժամանակավորապես Գրանցել

- 1-ին և 2-րդ տողերը լրացվում են ինքնաշխատ:
- 3.1 սյունակը լրացվում է դիմումատուի կողմից: ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում գրանցված գործող ՀԴՄ-ների ցանկից ընտրվում է այն ՀԴՄ-ն, որն անհրաժեշտ է հանել գրանցումից:
- 3.2 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակի արժեքի հիման վրա լրացվում է ընտրված ՀԴՄ-ի գործարանային համարը:
- 3.3 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակի արժեքի հիմար վրա լրացվում է ընտրված ՀԴՄ-ի տեղադրման հասցեն:
- 3.4 սյունակում համակարգի կողմից՝ 3.1 սյունակի արժեքի հիմար վրա լրացվում է այն օբյեկտի գործունեության տեսակը, որի համար գրանցված է 3.1 սյունակում ընտրված ՀԴՄ-ն:

«Հիշել ժամանակավորապես» հրահանգը պահպանում է դիմումը «Անավարտ հաշվետվություններ»-ի ցանկում, եթե դիմումը չի պարունակում սխալներ:

«Գրանցել» հրահանգը պահպանում է դիմումը «Լրացված հաշվետվություններ»-ի ցանկում, եթե դիմումը չի պարունակում սխալներ: